## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՇ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Արմաշ համայնք
ՀՀ, Արարատ մարզ, գ.Արմաշ, (0234)60051,

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

26 ՀՈՒՆԻՍԻ 2015թվականի N 12

## ԱՐՄԱՇ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԵՐԸ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՄԲ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 28.10.2010թ. թիվ 1477-Ն որոշման և «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 20-րդ կետի պահանջով

1. Թույլատրել համայնքի ղեկավարին օրենքով սահմանված կարգով համայնքի սեփականություն հանդիսացող 0181 ծածկագրից 1,0874 հա V կարգի վարելահող 0180-0007 ծածկագրից 1,5050 հա խոտհարք վարձակալության տրամադրել մրցութային կարգով:

2. Սահմանել վարձավճարի մեկնարկային գին մեկ հեկտար վարելահողի համար տարեկան 2000 /երկու հազար/ դրամ, իսկ խոտհարքի մեկ հեկտարի համար՝ տարեկան 1000 /մեկ հազար/ դրամ:

Կողմ -4 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ՋԵՅՆԱԼՅԱՆ ՌՈԲԵՐՏ

2. ՄԿՐՏՈՒՄՅԱՆ ՔՐԻՍՏԻՆԵ

3. ՇԱՀՆԱԶԱՐՅԱՆ ԲԱԲԿԵՆ

4. ՇԱՀՎԵՐԴՅԱՆ ՄԱՆՈՒԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՀԱԿՈԲ ՋԵՅՆԱԼՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՇ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Արմաշ համայնք
ՀՀ, Արարատ մարզ, գ.Արմաշ, (0234)60051,

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

26 ՀՈՒՆԻՍԻ 2015թվականի N 13

## ԱՐՄԱՇ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 05.05.2015 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 10 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի պահանջներով.

Արմաշ համայնքի ավագանու 05.05.2015 թվականի «Արմաշ համայնքի վարչական տարածքում պետական սեփականություն հանդիսացող հողերից 92,0757 հա, 55,2035 հա և 76,7032 հա V կարգի արոտները վարձակալությամբ տրամադրելու մասին» թիվ 10 որոշման 2-րդ կետի 500 /հինգ հարյուր/ բառերի փոխարեն կարդալ 1000 /մեկ հազար/:

Կողմ -4 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ՋԵՅՆԱԼՅԱՆ ՌՈԲԵՐՏ
2. ՄԿՐՏՈՒՄՅԱՆ ՔՐԻՍՏԻՆԵ
3. ՇԱՀՆԱԶԱՐՅԱՆ ԲԱԲԿԵՆ
4. ՇԱՀՎԵՐԴՅԱՆ ՄԱՆՈՒԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՀԱԿՈԲ ՋԵՅՆԱԼՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՇ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Արմաշ համայնք
ՀՀ, Արարատ մարզ, գ.Արմաշ, (0234)60051,

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

26 ՀՈՒՆԻՍԻ 2015թվականի N 14

## ԱՐՄԱՇ ՀԱՄԱՅՆՔԻ 2015ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 3-րդ կետի պահանջներով.

Արմաշ համայնքի վարչական բյուջեի պահուստային ֆոնդից հատկացնել

1. ,, Հասարակական կազմակերպություններին աջակցություն,, գործառնական դասակարգման ծախսային ծրագրի /բաժին 10, խումբ 7, դաս 1, ծրագիր 55/ տնտեսագիտական դասակարգման 4819 հոդվածին ավելացնել 200.0 հազ. դրամ, ճշտված պլանը սահմանել 500.0 հազ. դրամ:

2. ,, Սոց. անապահով անձանց,, գործառնական դասակարգման ծախսային ծրագրի /բաժին 10, խումբ 7, դաս 1, ծրագիր 54/ տնտեսագիտական դասակարգման 4729 հոդվածին ավելացնել 200.0 հազ. դրամ, ճշտված պլանը սահմանել 2200.0 հազ. դրամ, 4726 հոդվածին ավելացնել 100.0 հազ. դրամ, -շտված պլանը սահմանել 900.0 հազ. դրամ:

3. ,, Կառավարման մարմնի պահպանում,, գործառնական դասակարգման ծախսային ծրագրի /բաժին 1, խումբ 1, դաս 1, ծրագրի 51/ տնտեսագիտական դասակարգման 4252 հոդվածի ծախսը ավելացնել 70.000 հազ. դրամով, ճշտված պլանը սահմանել 620.0 հազ. դրամ:

4. Վ/բ-ի պահուստային ֆոնդը սահմանել 1897.4 հազ. դրամ:

Կողմ -4 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ՋԵՅՆԱԼՅԱՆ ՌՈԲԵՐՏ

2. ՄԿՐՏՈՒՄՅԱՆ ՔՐԻՍՏԻՆԵ

3. ՇԱՀՆԱԶԱՐՅԱՆ ԲԱԲԿԵՆ

4. ՇԱՀՎԵՐԴՅԱՆ ՄԱՆՈՒԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՀԱԿՈԲ ՋԵՅՆԱԼՅԱՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՇ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Արմաշ համայնք
ՀՀ, Արարատ մարզ, գ.Արմաշ, (0234)60051,

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

26 ՀՈՒՆԻՍԻ 2015թվականի N 15

### ԱՐՄԱՇ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ ՀՈԱԿ-Ի ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 26-րդ և «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 5-րդ մասերով.

Անհրաժեշտությունից ելնելով Արմաշ համայնքի մանկապարտեզ ՀՈԱԿ-ի հաստիքացուցակում ավելացնել ֆիզկուլտուրայի հրահանգչի հաստիքը՝ 0.5, դրույքաչափը՝ 50.000 /հիսուն հազար/ դրամ:

Կողմ -4 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ՋԵՅՆԱԼՅԱՆ ՌՈԲԵՐՏ
2. ՄԿՐՏՈՒՄՅԱՆ ՔՐԻՍՏԻՆԵ
3. ՇԱՀՆԱԶԱՐՅԱՆ ԲԱԲԿԵՆ
4. ՇԱՀՎԵՐԴՅԱՆ ՄԱՆՈՒԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՀԱԿՈԲ ՋԵՅՆԱԼՅԱՆ